մի, կարեկից սիրտ մը չի պիտի գտնէ, յաւիտենական արդարութենէ անիծուած՝ երերեալ ու տատանեալ պիտի շրջի և իւր անվախճան դառնութեան փոքրիկ ճաշակը կենցաղոյս մէջ տանելով պիտի երթայ անոր կատարելագոյնը ժառանգելու, որն որ իւր նման յամառեալ անզեղջներու համար արդար Նախախնամութեան խորին խորհրդովը սահմանուած է։

## ՀԱՆԴԷՍ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

### ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ

Օրագրիս նախընթաց թուով ծանուցած մեր խոստման համեմատ կը հրատարակենք ահա Ժառանգաւորաց Վարժարանի տարեկան հարցաքննութեան արդիւնքը և ընդ նմին պարգեւաբաշխութեան հանդիսի համառօտ նկարագիրը ՚ի գիտութիւն և ՚ի մխիթարութիւն մեր հեռաւոր ազգայնոց։

Հարցաքննութիւնը սկսաւ Յունուարի 23ին և աւարտեցաւ ներկայ ամսոյս 5ին։ Հարցաքննութեան առարկայքն էին՝ Հայերէն՝ ընթերցմունք, աշխարհիկ թարգմանութեամբ. Քերականութիւն, գրաւոր կրթութեամբ. Պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց, բարոյական և վարդապետական բացատրութեամբ. Թուաբանութիւն. Գծագրութիւն. Ճարտասանութիւն, գրաւոր վարժութեամբ. Եկեղեցական պատմութիւն, քրիստոնէական վարդապետութեամբ և եկեղեցական մատենագրութեամբ. Տաճկերէն և Գաղղիարէն, թարգմանութեամբ հանդերձ։

Հարցաքննութիւնը հրապարակական էր և ամեն ցանկացողք թէ միաբաններէն, թէ քաղաքացիներէն և թէ ուխտաւորներէն անխտիր ներկայ կը գտնուէին։ Ս. Պատրիարքը իւր ծանր զբաղմանց պատճառաւ միանգամ և եթ կարաց ներկայ գտնուիլ հարցաքննութեանը, Նոր Ալմանից Հիւպատոս Մեծ. Պետերման հայագէտ Պրոֆեսորի և փոխ-հիւպատոս Պ. Միմէօն Մուրատեանի հետ միասին. բայց Ս. Աթոռոյս աւագ լուսարար Գեր. Կարապետ Ս. Արքեպիսկոպոսը, ՚ի կողմանէ Ս. Պատրիարքին, շարունակ կը նախագահէր հարցաքննական ատենին. Թէպէտ իւրաքանչիւր հարցասէր ոք իրաւունք ունէր հարցմունքներ առաջարկել աշակերտաց, բայց յատկապէս նշանակուած ու հրաւիրուած կային և քննիչներ, ինչպէս էին Հայերէն լեզուի և քրիստոնէական ուսման համար Արժ. Ներսէս վարդապետ աւագ թարգման, Արժ. Մատթէոս վարդապետ, տեսուչ տպագրատան, Արժ. Երեմիա և Թովմա վարդապետք և այլք. Տաճկերէնի համար քանի մի հմուտ տաճիկներ, իսկ Գաղղիարէնի համար Մեծ. Պ. Յակոբ Պաքալ՝ դիւանադպիր Ռուսիական հիւպատոսարանի, և Պ. Հ. Սաւալանեան՝ քարտուղար Պատրիարքարանի։

Հարցաքննութեան արդեանց մասին մեր կողմէն չենք ուզեր գովեստներ կարդալ, այլ միայն բաւական կը համարինք անփոփոխ զետեղել օրագրիս մէջ այն Ցուցակը, որուն մէջ քննութեան ժամանակ Արքազան Նախագահի և միւս քննչաց ձեռքով նշանակուած է իւրաքանչիւր աշակերտի պատասխանատուութեան և յառաջադիմութեան աստիճանը. Այս ցուցակէն, ինչպէս հարցասէր ազգայինք, նոյնպէս և աշակերտաց հեռաւոր ծնողքը և բարեկամքը կարեն տեսնել իրենց զաւակաց աշխատասիրութեան պտուղը։

Հարցաքննութեան աւարտումէն երեք օր յետոյ [illegible] պարգեւաց նա-

հաստատութեան Տարեդարձին հետ
կատարուեցաւ պարգեւաբաշխութեան
հանդէսը Սթուտիօ հայաշէն թեմա-
րանին մէջ, ուր կատարուած էր նոյն-
պէս և հարցաքննութիւնը։ Թեմա-
րանը, դպրոցի տեսուչ Արժ. Մկրտիչ
վարդապետի հոգացողութեամբ, պատ-
րաստուած էր զարդ և վայելուչ կա-
րասիներով և դրօշներով, կային ա-
թոռներ և նստարաններ հանդիսակա-
նաց համար, ամբիոն ատենախօսու-
թեան համար, ծաղկազարդ սեղաններ
պարգևներու համար, կային նմանա-
պէս և խորհրդաւոր պատկերներ պա-
տերու վրայ, որոց մէջ նշանաւոր էին
Վեհափառ՝ Սուլթանի պատկերը և
իւր աջ և ահեակ Հայկայ, Ս. Վար-
դանայ և Հայաստանի պատկերները։
Հանդէսը սկսաւ առաւօտեան ժա-
մը 6ին և տեւեց մինչև 10ը, ուր ներ-
կայ էին ոչ միայն Սրբազան Պատրիարքը
բոլոր «միաբանական» ուխտիւ, այլ
և քաղաքական ու զինուորական երևե-
լի Վսեմ. Փաշաները՝ Նազիֆ և Լիվա,
Պաշտաւորը (Մօլլան), Միրալայը ու-
րիշ պաշտօնատարաց հետ միասին. Լա-
րոց Պեր. եպիսկոպոսը, Նոր Ալմանիոյ
Մեծ։ Զինուորական և Փոխ-Հիւպա-
տոսը, բազմաթիւ ուխտաւորք և քա-
ղաքացիք, թէ այր և թէ կանայք։ Մի
ազգային երգասացութենէ և հանդի-
սականաց տեղաւորուելէն զկնի վարժա-
րանի Տնօրէն-Պատուելի Պ. Գարեգին
Սերոբեան ամբիոն ելնելով ատե-
նական խօս խօսեցաւ Վարդանանց
նահատակութեան և դաստիարակու-
թեան հանդիսի խորհրդաւոր զուգա-
ւորութեան վրայ, եւ ապա առաջնա-
կարգ աշակերտներն ևս նմանապէս
ճառեր խօսեցան, հինգ հատ հայերէն
և մի հատ տաճկերէն, որոց պարու-
նակութիւնն էր գիտութեան, ազա-
տութեան, հայրենասիրութեան, ա-
ռաքինութեան և անձին ճանաչողու-
թեան ստորինքներուն վրայ։ Իւրա-
քանչիւր ճառախօսութենէն առաջ
կ'երգուէին ազգային երգեր, ինչպէս
և տաճկերէն ճառի կարդացուելէն
առաջ և յետոյ երգուեցաւ տաճկե-
րէն երգ 'ի պատիւ Օգոստափառ
Սուլթանին։ Երաժշտութեան ու-
սուցչի հիւանդութեան և բացակա-
յութեան պատճառաւ երգերու դաշ-
նակաւորութեանը, մասնաւորապէս
խնամք տարած էր Յարութիւն Սար-
կաւագ Կէօմիւշճեան, դպրոցի թը-
ւագիտութեան ուսուցիչը։

Ճառախօսութեանց աւարտումէն
յետոյ բաժնուեցան աշակերտաց պար-
գևները, որ առաջուց պատրաստուած
ու դրուած էին սեղանին վրայ ըստ իւ-
րաքանչիւր կարգի։ Յետոյ ութ աշա-
կերտք ներկայացուցին տրամախօսա-
կան Երգուած մի, զոր յօրինած էր
վարժարանի հայկաբանութեան և գը-
ծագրութեան դասատու Պ. Սարա-
պետ Նազըճեան, ազգային ժամանա-
կակից անցքերէ առնելով, որոյ բուն
նպատակն էր թէ՝ «Ճշմարտութիւնը
միշտ յաղթող է»։

Այս ներկայացումէն զկնի քաղա-
քական Վսեմ. Նազիֆ Փաշան համա-
ռօտ և իմաստալից ատենաբանութիւն
մը ըրաւ, որով յայտնեց Սթուտիօ Ս.
Պատրիարքին և միաբանութեանը իւր
ուրախութիւնը՝ վարժարանի յառաջա-
դէմ ընթացից համար, ջատագովեց
գիտութիւնը և նորա օգուտները,
պարզաբանելով, որ գիտութեամբ մի-
այն կարէ անհատ մի և ազգ՝ ճանաչել
իւր ճշմարիտ շահը և այնպէս տնօրի-
նել իւր գործքերը. իսկ առանց գի-
տութեան, փոխանակ շահ առնալու
իւր արարքէն, շատ անգամ մեծամեծ
վնասներու կ'ենթարկուի։ Յայտնեց
նմանապէս, որ Օգոստափառ Սուլթա-
նի բարեխնամ տէրութիւնը ճշմարիտ
փառք կը համարէ, երբ կը տեսնէ՝

որ կը հիմնուէին այնչափ ար-ցիւնոտեր ավանդներով կեղ-ծաղին, որ թէ իրենց անձին ու ազ-գին օգտակար է, և թէ Տէրութեանը պարծանք։

Սելիմ Փաշայի գեղեցիկ խօսքե-րուն պատասխանեց Ս. Պատրիարքը պատշաճ շնորհակալութեամբ, որով յայտնեց Նորա թէ Հայ ազգը, և հե-տևապէս Սիօնայ վարժարանը, որ-չափ յառաջադիմէ, պարծանքը Օս-մանեան բարեխնամ Տէրութեանն է, և թէ՝ իրեն ալ թէ շնորհակալութիւն ատենալը, այլ շնորհակալութիւն մա-տուցանելու պարտական է։ Նոյնպէս յայտնեց, որ իւրը՝ Ներ խօսի Վեհ. Փաշային առջև, ու թէ իրեն հետ կամ առանց հանդիսատեսի հետ. այլ իրեն Տանտիրոջ, իրեն Նորին կայսերական մեծապատուութեան իրաւունց Օս-մանեան կայսեր շնորհք կը հաս-տատէ, հայոց անդամն Հայոց բարեխնա-մութեան Ազգին Ս. Պատրիարքը՝ յայտնեց որ իւր ամէնական փափագն է կրել ամենամեծ պատիւ կատարել, այն է՝ պարտք առ Աստուած, պարտք առ Տէրութիւն և պարտք առ Ազգն, որոց իւրաքան-չիւրն իրարմէ կ՚ախտակցութեան է՝ չորրորդ յայտնեց, որ այս պարտուց կատա-րումն եղաւ գիտութեամբ գաստիարակ կութեան մէջ կը մնայ և հոգւով քաղ ուսանի, որ հիշէ Աստուած Նոյն-պէս և Տէրութեան պահանջածն եղա-նակն է, ինչ որ Աստուած կը պահանջ-չէ յաջողութեան մարդկութեան, ազգին և հեռու ուրուսանող, ազգային պարտք, ան-ձին կը հաճեցնէ, կերպ չափ ձգել և պատրաստուածը հանդիսական ատենին Վեհ. Տէրութեան և ազդ. Ազգին ...

Աւարտին Պատրիարքը բարեկան ժամանակ խօսքը, զգացմունք առնելով բանեցին, այն՝ օրհնութեամբ, կերեց հանդէսը, և պաշտօնական զինեցին

եկեղեցին Սուրբ Յակոբայ պատարագ նա-րականը — Նորոգեալ պատկեր ու եւր եւ-րով, գեղեցիկ յարմարութեանը մատու-ցին Աստուծոյ և տարս Սրբ. Պատրիար-քը հանդիսին մասն կ՚ Պատրիարքարան և հանդիսականները ուրախութեամբ դարձան իրենց տեղերը։ Իսկ Վեհ. Փաշաները երկար ժամանակ դարձեալ մնացին Պատրիարքարանի մէջ և յետ մատուցական և սիրալիր խօս-տակցութեան՝ Վեհ. Նուլիֆ փաշան խնդրեց Սրբազան Պատրիարքէն հան-դիսի մէջ կարդացուած ատենաբանու-թեան և երգի օրինակը, և միանգամայն թախանձեց որ եթէ հնար է, հանդէսի բոլոր եղելութիւնքն ատենաբանն գրով և թարգմանութեամբ հրատարակութիւ-նովայն կը յանձնէ, որ Օսմանեան տե-րութեան մէջ ատենաբանեն գտեր չէ. Նե-րքին պատմուած հանդէսն ալ աւելի միայ այս մտաբերական աստուածպաշտութիւ։

Հանդիսի հանդէսն աւարտն պատուելի ըս Յերուսաղեմայ պաշտօն արժան, կը հաճեցնէ նորանց։ Եթէ ոչ բարոյ Ձեռ-ներու ... Պ... Պատրիարքին Սուրբ աւետիս առատօրինակութեան օրհնութիւ մեծագոյն հարազատներ ընտրեալ ազ-գային ... 

ԸՆԴՀԱՆՐԱՊԱՏՕՆ ՃԱՌԸ

ՄԵԾԱՐՈՅ ՁԵՌՆԱՍՏԵՂԱՆ

... Հայրենիքէ և քաղաքակրթութեան մասին յառաջութեան պսակուած՝ և կրօնական կար-գով միայն կապուած Ազգի մը հանգանակ հանմխիթարութեան գլխաւոր մասերը կը կազմեն ուխտապաշտութիւն գու-մարուածերը՝ եկեղեցական ուժական գու-թիւնները և ազգային հանդէսներ։ Ասոր՝ մեր Հայաստանեայց առա-քելական եկեղեցւոյ յիշուած դաւանք-ները, ինչպէս Հայրենեաց մէջ և դա-մանց օտար աշխարհը կը մարբեր կու

# ՑՈՒՑԱԿ ՈՒՍՄԱՆՑ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՑ

## ՀԱՐՑԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

| ԺԱՌԱՆԳԱՒՈՐՔ | Եկեղեցական Պատմութիւն | Ճարտասանութիւն | Թուաբանութիւն | Գաղղիերէն | Տաճկերէն |
|---|---|---|---|---|---|
| Յակոբ Ընուշեան Պոլսեցի | քաջալաւ | աւարտած | աւարտած | քաջալաւ | քաջալաւ |
| Կարապետ Տ. Ստեփանեան Տիգրանակերտցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ |
| Գէորգ Յարութիւնեան Եդեսացի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | լաւագոյն | լաւագոյն |
| Գրիգոր Բարսեղեան Կեսարացի | լաւագոյն | լաւագոյն | քաջալաւ | լաւագոյն | լաւագոյն |
| Կարապետ Բարունակեան Արապկերցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | լաւագոյն | քաջալաւ |
| Կարապետ Տատեան Շապինգարահիսարցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | լաւագոյն |
| Գրիգոր Սարգսեան Կեսարացի | .... | քաջալաւ | .... | քաջալաւ | քաջալաւ |

| | Պատմութիւն Սուրբ Գրոց | Քերականութիւն | Թուաբանութիւն | Գծագրութիւն | Ընթերցմունք |
|---|---|---|---|---|---|
| Գաբրիէլ Կարապետեան Խարբերդցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | .... | .... |
| Մելքոն Յակոբեան Թոքատցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | լաւ | .... |
| Ներսէս Գաղտասարեան Անթափցի | լաւագոյն | քաջալաւ | լաւագոյն | քաջալաւ | .... |
| Արշակ Յովսափեան Կարնեցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | .... | .... |
| Սարգիս Պօղոսեան Ադրիանուպոլսեցի | քաջալաւ | քաջալաւ | լաւագոյն | .... | .... |
| Մարտիրոս Յակոբեան Արապկերցի | քաջալաւ | լաւագոյն | լաւագոյն | քաջալաւ | .... |
| Կարապետ Ստեփանեան Բերիացի | լաւագոյն | լաւագոյն | քաջալաւ | .... | .... |
| Թադէոս Գրիգորեան Ադրիանուպոլսեցի | քաջալաւ | քաջալաւ | քաջալաւ | լաւագոյն | .... |
| Յարութիւն Յակոբեան Կեսարացի | քաջալաւ | լաւագոյն | քաջալաւ | լաւագոյն | .... |
| Սերովբէ Պօղոսեան Օվաճըգցի | քաջալաւ | լաւագոյն | քաջալաւ | .... | .... |
| Աբրահամ Տ. Վարդանեան Տաւժիկցի | քաջալաւ | լաւագոյն | .... | լաւ | .... |
| Կարապետ Տ. Յովհաննէսեան Թոքատցի | քաջալաւ | լաւագոյն | քաջալաւ | լաւագոյն | .... |
| Կարապետ Թովմասեան Չանգքալեցի | լաւագոյն | լաւ | .... | լաւագոյն | .... |
| Գէորգ Տ. Յարութիւնեան Խմայէլցի | քաջալաւ | լաւագոյն | .... | քաջալաւ | .... |
| Գէորգ Սարգիսեան Արապկերցի | լաւագոյն | լաւագոյն | .... | լաւ | .... |
| Յարութիւն Գաղտասարեան Անթափցի | լաւագոյն | լաւագոյն | .... | լաւագոյն | .... |
| Կարապետ Աշըգեան Կեսարացի | լաւագոյն | լաւագոյն | .... | .... | .... |
| Մելքոն Մանուկեան Վանցի | լաւագոյն | .... | .... | լաւ | .... |
| Արմէն Աստուածատուրեան Լաւադիկեցի | .... | լաւ | .... | .... | .... |
| Աղէքսանդր Յովսէփեան Եգիպտացի | .... | լաւագոյն | .... | .... | .... |
| Գաբրիէլ Պօղոսեան Եգիպտացի | .... | .... | .... | .... | .... |
| Միքայէլ Գրիգորեան Արապկերցի | .... | .... | .... | .... | .... |

| ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ | Եկեղեցական Պատմութիւն |
|---|---|
| Միքայէլ Սարկաւագ | քաջալաւ |

Քննիչք

Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՍԱՅԻ ԱՐՔ. ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹԱՐԳՄԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ
ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ

ԹՈՎՄԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Տ. Հ. Թ. ՍԱՀԱԿԱՆԵԱՆՑ

Յ. Մ. ԲԱՍՔԱԼ